Հայտարարություն

ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի **Մերձավան բնակավայրի <<Մերձավանի մանկապարտեզ** >>ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հաստատության դաստիարակի պաշտոնի թափուր հաստիքը զբաղեցնելու համար.

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված նախադպրոցական ուսումնական հաստատությունների պաշտոնների նկարագրի՝ նախադպրոցական ուսումնական հաստատության **դաստիարակի** պաշտոնը զբաղեցնողը պետք է՝

1)տիրապետի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկայով աշխատելու հմտություններին.

2)իմանա ստորև նշված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները՝

ա.Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին»,«Նախադպրոցական կրթության մասի», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Լիցենզավորման մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը, «Նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը», Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի համապատասխան նորմատիվ իրավական ակտերը.

բ. մանկավարժության, հոգեբանության, ֆիզիոլոգիայի, հիգիենայի, դաստիարակչական աշխատանքի տեսության և մեթոդիկայի հիմունքները:

Որակավորման պահանջները՝ հաստատության դաստիարակի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա՝ միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ կամ միջին կամ բարձրագույն մանկավարժական կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում նախադպրոցական կրթության ոլորտում առնվազն երեք տարվա մանկավարժական գործունեության ստաժ:

Դաստիարակի հաստիքի համար սահմանված է 1,17 դրույք՝

Մրցույթին մասնակցելու համար անձը պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4)աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի հոկտեմբերի 09 -ից մինչև նոյեմբերի

04-ը ներառյալ ամեն օր՝ ժամը 11:00-17:00-ն բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ 25.03.2022 թ-ի № 471-Ա/2 հրամանի 2024թվականի հոկտեմբերի 22 և 1981-Ա/2 մշակված հարցաշարերի:

Մրցույթի թեստավորման փուլը կանցկացվի 2026 թվականի նոյեմբերի 06-ին ժամը 11:00-ին, իսկ հարցազրույցի փուլը՝ նույն օրը թեստավորման արդյունքների հրապարակումից հետո:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 06 -ին, ժամը՝ 11-00-ին, ՀՀ Արմավիրի մարզի «Մերձավանի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում:

Հասցե՝ բնակավայր Մերձավան , Երևանյան խճուղի 2-րդ փողոց, թիվ 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094 636369 հեռախոսահամարով:

Էլ.հասցե merdzavanimankapartez2025@mail.ru